

դեցւոյ այս վիճակ, եւ քանի որ քաղաքական այլ եւ այլ պայմաններ եւ նպատակներ այժմ առաւել կյածախեն եւ երբէք յոյս չկայ որ դադարին, պէտք է շատ զգուշանալ իւրաքանչիւր եկեղեցւոյ անկախութեան եւ ինքնուրայն ազատութեան համար, եւ երբէք պէտք չէ պատիր խօսքերէն խարութիւն եւ եկեղեցւոյ նախնական վիճակը արդիւնաւուրել կեղծողներուն ծուզակներուն եւ խիստ խորամանկութեամբ եւ խարդաւանութեամբք հնարաւած մեքենայութեանց մէջ որսացութիւն:

Ա.ԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՈՒԹԻՒՆ ՀԱԼԱԾԱՅ, ՈՒՐԱՅՐԱՅ,
ՀԵՐՉՈՒԱԽՈՅԱՅ ԵՒ ՇԱԺԱՆԵԼՈՅ ՑԱՅՈՅ.

(Ը-Ե-Հ-Ա-Կ-Ե-Բ-Ե-Հ-)

ՅՈՒ ՃԵ.

ՅՆՀԱՆՆ Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻԱՆԻ ՀԱՐԱ-
ՎԻՐ ՂԱՅ 16:

(Ըմք Տեառն 596): Երբահամու կամուղիկոսի յԵղօթանից ի նզովին ժուղվով զԱխերիովն կաթուղիկոս Վրաց և յորոշելն զնա յեկեղեցւոյն Հայոց, յաղագս ընդուելոյ նորին գԲաղկեդոնի Ժողովն, նա ինքն Ախերիովն ամբաստան եղել զԵրարահամ կաթուղիկոսէ առ Մօրիկ կայսր Յունաց ի վերադասութեան, և նա տեսեալ եթէ Հայք ոչ ընդունին զայն, և Ժողով ևս արարեալ ընդ ամբաստանութիւն Ախերիովնի՝ իրեւ ոչ ընկալան Աշպիսկապոք Հայոց ուրանօր զտան քըսան և մին անձինք ըստ մտաց կաթու-

զիկոսին Վրաց և զժառութիւն ևս անկաւ այսու ի մէջ Հայոց և Վրաց, ապա կայսրն սրոշեալ զայս իւրոյ բաժնի յուշնական մասին ի հնազանդութենէ Երբահամու, (թա. 600) կացուցանէ նոցա հակառակաթոռ զՅովհաննէս կաթուղիկոս ի Կողացգաւառէ ի Իսագարան գեղջէ, աւզի բնակութեան ապարով նմա ի Կոտայի ըզք քաղաքագիւղն Եւան : Եյս եղեւ պատճառ առաւել ևս սաստկանալոյ հակառակութեանց ի մէջ Հայոց և Յունաց մինչև ցմահ Յովհաննու :

Բայց (թա. 605) յառնել Խոսրավայ արքայի Պարսից ի վերայ քաղաքացն Յունաց յաւուրս Փոկասու կայսեր ի վրէմ մահուն Մօրկայ, փախուցեալ գոլով առահի պատերազմաց ի Կարին, որ էր ի բաժնին Յունաց՝ իրեւ ի տեղի ապահով, վարհցաւ ընդ գերեացն բազմութեան յետ երկուց ամաց պատերազմին յԵհմատան յԵշոտոյ զօրավարէ Հայոց՝ յորդւոյ Ամբատայ առավետին Բաղրատունեոյ, և անդ ուրեմն յետ մետասան ամաց գերեվարութեանն իւրոյ փախճանեալ՝ բերաւ մարմին նորա յԵւան և եղաւ յեկեղեցին, զոր իւր իսկ էր կառուցեալ : (Յովհ. Աթ.՝ Ամուէլ.՝ Ասողիկ Վարդապեան. — Ալրակոս):

Առաջեւ աշակերտ ՅՆՀԱՆՆ- Մայրակալ- նեցոյ :

(Ըմք Տեառն 629): Եզր կաթուղիկոս Հայոց այն ինչ ընկալեալ զժառովն Քաղկեդոնի ի Կարին վերագարձաւ յաթոռն հայրապետութեան ի Վավին, յընդառաջին նմին ուխտի եկեղեցւոյն՝ Յովհան Մայրավանեցի Փիլիսոփաս կոչեցեաւ

լըն ի Յովհանք, Կաթուղիկոսէ որ Փակակալ
կարգեան էր ի նմանէ Ակեղեցւոյ սրբոյն
Գրիգորի, լուեալ եթէ Կաթուղիկոսն
ընկալեալ է զժառղովն Քաղկեդոնի, հեր-
քեալն միանգամ և երկիցս ի Վարդապե-
տաց Հայաստանեայց Երկեղեցւոյ, իրեւ
ոչ ելնա ընդ առաջ Կաթուղիկոսին,
մերժեաց զնա յԵրկեղեցւոյ, որում հա-
լածական զնացեալ յերեսաց Հայրապե-
տին յԱզուանս ի զլուխ Դարդման գա-
ւառի, ստացաւ անդէն յաշակերտ ին-
քեան՝ զԱրդիս ոմն անուն. սա անկանի
ապա յայլ և աց հերձուածս, և յաղանդ
Յուլիանեայ և Արելի ըստ Վարդանայ
մեծի, որով և զբաղումն կարծեցոյց ան-
կանել Վարդապետին իւրոյ մեծի յայն
մոխտւթիւն հերձուածողութեան, զոր
հերքէ Յօվհ. Կաթուղիկոս իւրովն բա-
նիւ, եղեալ զհերձուածս ի վերայ նո-
րին աշակերտի, որպէս եղեալ է մեր ի
պատմութեան Ճողովոյն :

“Օսմանէ ապա (Յովհ. Մայրավանեցւոյ) համբաւ ամբաստանութեան պատմի, իբր դառն հերձուածս իմ նըմա մուծանել յեկեղեցի սուրբ : Ասկայն ես ոչ կարեմ հաւանութիւն իմց կամացս տալ վասն այնպիսւոյ առնն, թէ զիարդ նա կարէր խորհել առ ի փլուզանել զուղիլ հաւատոյ շինուածս . այլ կարծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառագիր և խորիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ . բայց եթէ սակա Ասրգսի աշակերտի նորա համբաւէ ոք զայսպիսի չար հերձուած ընձիւղել, և ես ոչ վասն նորա հակառակիմ, զի իմ իսկ ընթերցեալ է զգիր մեասու նորա : Եւյլ վասն զի Յովհանիրաց յիւրմէ հալածեաց

զԱրգիսն, սակա այնորիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն չերձուած:

Այն Աարգիս՝ աշակերտ Մայրավանեցւոյն՝ բազում ինչ առեալ ի մոլորութենէն Պողեկեանց՝ խառնեաց ընդ մոլորութիւնս Յուլիանիտաց, Ապողինարեանց, Մարկիոնեանց և Աարելիանց, և Հնարեալ զայլ իմն մոլորական աղանդ, զբեաց ևս զպէսսպէս թիւնալից բանս ի խորհուրդ հաւատոյ և ի տնօրինութիւնսն Քրիստոսի, զորս Յովհ, Կաթուղիկոս չար և դառն հերձուածս կոչէ:

Ի սփռել այսպիսի աղանդաւոր բանից
Արգսի, զորս թարգմաննաւ էր ի Յու-
լիանեայ Եղիկանացւոյ, զորս Չամչեանն
տայ և Վարդապետի նորին Մայրավա-
նեցւոյ, Կերսէս ԳՏ. Կաթուղիկոս Շինող
ժողով արարեալ եօթնետասն Եպիսկո-
պոսաց Հայոց՝ Նզովեցին զամենայն հերե-
տիկոսս և հերձուածողական գիրս, ընդ-
որս և զՔաղկեդոնի Ժողովն ըստ աւան-
դութեան Քոյչ. Կաթուղիկոսի:

Իսկ եթէ թարգմանիչ զբոյն Յուլիանեայ
Աղեկառնացւոյ էր Աարդիս աշակերտ Մայ-
րավանեցւոյն՝ վկայէ և Փոտ պատրիարք ի-
թղթին առ Զաքարիա Կաթուղիկոս։ «Ղը-
յորժամ ասէ թարգմանեցին ի հայս զիրքն
Յուլիանեայ աղիկառնացւոյ ի ձեռն Աա-
րգսի ի Ճողովն Մանազիկերտու՝ առաւել-
զօրացան և բանք նորա եւն։ Որով յայտ-
է թէ ընդունայն է զբարտութիւն ։
Չամչեանի, որ հայհոյական և յիմարա-
կան կոչէ զբանս նորա առ Խցր։

3. **απότελεσματική** ουσία της ανάπτυξης παραγωγής
4. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
5. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
6. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
7. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
8. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
9. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης
10. **απότελεσματική** παραγωγής της ανάπτυξης

80Դ. ԺՀ.

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԲԱՐՁՐԱԳԵԼՈՒՄ:

(Եմք Տեառն 655): Ի ժամանակին, յորում երսէս Պ. Շինող զշամազասպ Մամիկոնեան փոխանակ Ամբատայ՝ Պատշը և իշխան Հայոց կացուցանէր և զորդի Թէոգորոսի Ուշառնւոյ զԱ արդ ի զօրավարութիւն Հայոց, ի վեր երևեին դարձեալ ի աեղիս աեղիս Հայաստանի այց աշխարհի աշակերտեալք ոմանք ի դասուէ աղանդաւորաց Պօղիկեանց շառաւիղեալք ի Մանիքեցւոց, յորս խառն էին և Երևորդիք, որպէս յիշատակեցաք մեք ի դ. ծագման Երևորդեաց, յամի 315, զորս սուրբն Ամերովք երկիցս ջնջեաց ի Կողմը գաւառէ:

Ի՞նդ դէմ սացին զրեաց Յովհաննէս Խմաստասէր ճառս սքանչելի վարդապետութեամբ, ունայնացուցեալ իսպառ ըզհիետիկոսութիւն նոցա, որք զանդամնն Քրիստոսի յիւրեանս պատուաստեալ, ի ձեռն իշխանութեան այլազգեաց բռնանային ի վերայ բազմաց :

Իշազումք ի սոցանէ կոչեցան Պօղիկեանք կամ Պոլիմիկեանք՝ և այս ասէ ։ Զամշեան՝ կամ վասն հետեւելոյ նոցին ի մոլորութիւն երկուց աղանդաւորաց Մանիքեցւոց, որոց անուանք էին Պօղոս և Յովհաննէս, յորոց և սոքա հաւաստի է եթէ կոչեցեալք իցեն Պօղիկեանք կամ Պող-յովհաննեանք : Առքա զանուն քրիստոնէութեան ունեին, և զամենայն օրէնս քրիստոնէութեան առ ոտն հարկանէին . արտաքուստ բարեպաշտ ձեանային, և ի ներքուստ ի ամենայն պղծութեամբ էլն. որպէս տեսանի ի Օռան. Ի. գրոց. եր. 766. Զմէ, Պատմ.:

Սոքա աղանդաւորք սփռեալ ի զանազան աշխարհն, ոմանք եկին ի Հայս ընդմջն եօթնելորդ դարու, որոց ընդ դէմ որպէս յիշեցաք՝ Յովհաննէս Խմաստասէր յետ իրը վախթուն ամաց՝ գրէ այսպէս : Ա Առքա, ասէ, գտան որոգայթ իրբե ըզհ վարմ հաւորսաց ձգեալ ի յետին ժամանակիս ի մէջ ժողովրդեան ըմբռնել գախմարս և զգարզամիտս ի մարդկանն. որք չարեաց ի չարիս վերացեալ ելին ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեսատեսութիւն, և անդուստ յանաստուածութիւն և ի գիւապաշտութիւն էլն. (Ի. հար, եր. 356): Յայսոցիկ աղանդաւորաց սերեցան յունադաւան հայք կամ հայհոռոմը, որոց շառաւիղեալք կան մինչեւ ցայսօր ի փաքըն Հայաստան :

80Դ. ԺԷ.

Պատկերան Հայ աղանդաւորւթիւն է պահապահ գույն :

(Եմք Տեառն 717) : Ի վերջին աւուրս կաթուղիկոսութեան Եղիայի միւսանգամ երևեցան յաշխարհին Հայոց չար աղանդաւորք շետեռդք Պօղիկեանց, որոց զբազումն ի պարզամտաց որսացեալ արկին ի նորիսորատ կորստեան, որոց և բազում ընծայիւք հաճեալ զմիտս ոստիկանին Ալթայ՝ նորին՝ ձեռնաստութեամբ զօրանային :

Քարոզին սոքա ըստ չարութեան իւրեանց, նախ թէ չէ արժան պատիւ տալ պատկերաց, և յետոյ՝ թէ և ոչ խաչի, ասելով՝ կռապաշտութիւն է այն, հայհոյին թէ և ոչ Եստուծոյ պտղա է պաշ-

տօն մատուցանել արտաքուստ, զի նա ոչ
կարօսի, ասեն, մերում երկրպագութեան,
և ապա քայլողէին թէ պարագա պատուել
զդես, զի մի չար ինչ արացեն մեզ, այլ
բարեկամացեալ յաջողիսցեն, ի խաւարի
զիսաւարայինոն գործէին ծանակութեամբ,
և ի լոյս տռւնջեան անախա զանձինս ե-
րեկցուցանէին առ ի պատրելոյ զմիամի-
տըս. վասն օգնութիւն գտանելոյ աղա-
շէին զարեգակն և զուսօփն, կոչէին կա-
խարդանօք զողային դես. զմեռեալս զը-
նէին ի վերայ տանեաց և շնչէին ի վեր
հայելով. առեալ զարիւն տղայոց՝ ընդ
ալեր զանդեալ ուտէին, զառաջին ծնունդ
կնոջ խաղացուցեալ ձեռաց ի ձեռս, յոյր
ձեռն և մեռանէր, զնա մեծ ոմն պաշտէին
և վկայ զնա կոչէին յիրս երդման. ի մե-
ռակալ տղայն ևս երդնութին, որով կարծե-
ցուցանէին տղիտաց՝ եթէ յԱռուած
ձայր և ի միաժին Որդի նորա երդնուն:
Առքա էին յաղանդառորացն՝ երե եալ
յառուրս Կերսիսի Ծինողի, յիշատակեալ
առ ի մէնջ ի դլ. Երեորդեաց՝ յամին
655. յորոց ելին Եղիտիք, որք և մաս-
նաւոր անուամբ Երեորդիք կոչէին: Որք և
յետ մահու Կերսիսի միւսանդամ խլըր-
տեալ եղին զոյջ իւրեանց ուրեք ի չայս
առ Քրկայ լճիւ:

Յարեցան յաղանդաւորս յայսոսիկ և
յՆուանից ումանք՝ որք վասն պատկերա-
մարաւթեան մերժեալ ի Կաթուղիկո-
սաց իւրեանց հետզհաէ խօս տուեալ
ապաւինեցան ի սոսաւ Յաւելան ի դաս
սոցա և ի Հայոց յաւուրս կապանաց սըր-
բոյն Ուհակայ ի Վրդովման աշխարհին.
զի ըստ Յայշաննու Խմաստասիրի և Ի
միասին ընթացեալ կուաեցան ամենայն

“ուստիք՝ որպէս անգեղք աշխարհաց ի
և նեխաշաղիղ ինչ գէշ,,,:
Եւ զի ի նմին ժամանակի յուղէին ի
բաժնի Յունաց յերկուց կողմանց ևս ի
քաղկեդոնականաց և ի Պօղիկեան աղան-
դաւորաց վասն ինչ ինչ խարութեանց
ծիսից, որպէս եղեալ է մեր յեօթներորդ
Ժողովն Դմիայ, յամի 719, ի 5-րդ հատոր
մատենիս: Հասեալ ոմանց ի սոցանէ ի
Մեծն Հայս, խռովեցին զժողովուրդն
փոխանակ զՃշմարիան քարոզելոյ, մինչեւ
կոչել զնոսա հերետիկոս և աստուածա-
չարչարս, և արհամարհել զպաշտամունս և
զպատարագս նոցին. և թէպէտ Աղիա
Կաթուղիկոս հալածեր զնոսա ի վիճակէ
իւրմէ, բայց ոչ կարաց խաղաղացուցանել
զազգն: Եյլ յոջորդ սորին Յովհաննէս
Խմաստասէր փոյթ ունելով յանդորրու-
պահել զհօտ իւր, որ յերեսաց աղանդա-
ւորացս տարութերէր, Ժողովով հերքեաց
զամենայն աղանդաւորսն Պողիկեանց և
զնոցին հետեւովս յերկրորդում ամի կա-
թուղիկոսութեան իւրում: (Տես ի 5-րդ
հար. Գրոցս):

807. ԺԲ.
Առեւտաննոս Ե. հաշտացնալիք կալու-դիմու-
ման վայրին :

թոռ Հայրապետութեան, յորում և վարեալ զիշխանութիւն զամն երկու վախճանի անդէն:

(Հայուսականի բառ)

ԱԲԷՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱՆ.

(Հայուսականի բառ)

Գիտնական Յակոբ Կաթուղիկոսն Կլայեցի ի Հայրապետական Աթոռ բարձրանալով՝ իւր բոլոր ուշը եւ ջանքը նուիրեց Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան, վանօրէից բարեկարգ եւ օգտաւետ զարգացման, եւ ժողովրդեան պիտոյից լրման եւ ըստ կարեւոյն անթերի մատակարարման: Աւստի նախ Ներսէն Ենորհալոյ Խնդհանրական կոչուած շրջաբերականը օրինակել տուառ եւ ուղղեց ի յորդոր Առաջնորդաց, Վարդապետաց, մեծամեծաց, անապատականաց, Քահանայից, իշխանաց, ժողովրդեան՝ զինուորաց եւն, որպէս զի ըստ իւրաքանչիւր աստիճանի եւ կոչման արթուն մնան եւ հսկեն իւրեանց պարտաւորութեանց ի կատարումն:

Եւ ապա գարձեալ այլ եւ այլ պատուէրներ տուաւ Առաջնորդաց, Վարդապետաց, Քահանայից եւ ժողովրդեան համար եւ Պապականութեան Խլրտմանց գէմը առաւ: Յատկապէս մի քանի նշանաւոր վանօրէից մէջ Եկեղեցականաց համար հաստատուած դրաբրոցները յաւէտ արդիւնաւոր կացուցանելոյ միջոցները ապահովեց, յորոց ի ժամանակին՝ բաւական ուսեալ եւ հըմուտ եկեղեցականներ ծաղկեցան, որք

ըստ բաւականին բանասիրական նոր հեղինակութեամբ՝ կրօնական եւ մեկնաբանական եւն աշխատասիրութեամբք զարգացուցին եւ ճոխացուցին Հայկական գրականութիւնը, միանգամայն ամեն տեղ եղած դպրոցաց մէջ ազգային եւ կրօնական դաստիարակութեան ոյժառուին ըստ յորդորանաց Յակոբ Հայրապետին:

Լեւոն Բ. արքայն եւս ոչ սակաւ օժանդակ եղաւ եւ պաշտպան կանգնեցաւ Հայրապետի բարի նպատակին եւ ազգօգուտ ճգանց որ վիճի աղատութեանն ի գերութենէ՝ սուղ ժամանակէն յետոյ նստելով Հայոց թագաւորական ի գահն՝ աշխարհաշէն հոգածութեանց եւ ջանից մէջ աւելի հետեւեցաւ ժողովրդեան զարգացման եւ ըստաւորութեան՝ ինչպէս նա եւ անգորը կենցաղավարութեան միջոցները հայթայթելոյ: Թէ ի Կիւլիկիա եւ թէ յարեւելս բազում վանօրայքը վերանորոգեց ուր որ չկար դպրոցներ յաւելցոյց եւ աւելի նշանաւոր վիճակի բերաւ հասցուց, եւս առաւել բարգաւաճ յարդարեց Մէծ-+առ կոչեցեալ նւխտի դպրոցը, յորմէ բաւական նշանաւոր աշակերտներ ելան:

Մեր նախնեաց գրած եւ թարգմանած շատ գրեանքը օրինակել տուաւ եւ զանազան վանօրէից նուիրեց կրկին բարի նպատակով: Ինչպէս Հաղպատայ վանուց վերայ առանձին իմն աւելի ոէր եւ համակրութիւն ունէր, նոյնպէս ըստ նիթականին շատ օգնութիւններ շնորհեց յիշեալ վանուց, ինչպէս նա եւ բաւական ընտիր ձեռագիրներ եւ կամքրո-